ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 9, 1951 Общественные науки

ԵՐՎԱՆԴ ՇԱՀԱԶԻԶ

1951 թ. օգոստոսի 14-ին 96 տարեկան հասակում վախճանվեց Գրականության ինստիտուտի ավագ գիտական աշխատակից, բանասիրական գիտությունների դոկտոր Երվանդ Հովակիմի Շահազիզը։

Երվանդ Հովակիմի Շահազիզյանը ծնվել է 1856 թվականի հունվարի 13-ին Աշտարակում։ Սկզբնական կրթությունն ստացել է Երևանի գավառական դպրոցում, որն ավարտելուց հետո 1870 թվականին իր հորեղբոր՝ բանաստեղծ Սմբատ Շահազիզի ջանքերով ընդունվել է Մոսկվայի Լազարյան ճեմարանը, որն ավարտել է 1875 թվականին։



1882 թվին նա փոխադրվել է Նոր Նախիջևան և պաշտոնի անցել տեղի Թեմական դպրոցում, որտեղ աշխատել է ամբողջ 35 տարի, նախ որպես ուսուցիչ, ապա տեսչի օգնական, իսկ հետագայում՝ որպես տեսուչ։

Մանկավարժական աշխատանքին զուգընթաց Երվանդ Շահազիզը 80-ական թվականներից զբաղվում է գրական ու բանասիրական աշխատանքով, նա պարբերական մամուլի էջերում («Հանդես գրականական և պատմական», «Լումա», «Տարազ» և այլն) հրատարակում է մի շարք հմտալից աշխատություններ։

1890-ական թվականներից Շահազիզը մեծ եռանդով ձեռնամուխ է լինում ռևոլյուցիոն դեմոկրատ Միքայել Նալբանդյանի ընդարձակ կենսագրության պատրաստման աշխատանքներին։ Մի քանի տարիների հետազոտության և պրպտումների արդյունքն է հանդիսանում նրա «Միքայել Ղազարյան Նալբանդյան» ծավալուն ուսումնասիրությունը, որ լույս է տեսել Մոսկվայում, 1897 թվին։

Այնուհետև Շահազիզի ամենասիրած զբաղմունքներից մեկն է լինում Նալբանդյանի կյանքի և գործունեության հետ կապված նյութերի հավաքումը, մշակումը և դրանց՝ մաս-մաս հրատարակությունը պարբերական մամուլի էջերում կամ առանձին գրքերով։ Այսպես, 1900 թվին «Տարազի» մի շարք համարներում լույս է տեսնում նրա ընդարձակ հոդված-աշարքը Նալբանդյանի կենսագրության հետ կապված որոշ հարցերի մասին։ 1902 թվին «Լումա» պարբերականում լույս է տեսնում նրա «Միքայել Նալբանդյանը Պետերբուրգում» հոդվածը։ Ընդամենը երկու տարի անց՝ նույն պարբերականի մի քանի համարներում լույս է տեսնում Շահազիզի մի այլ ընդարձակ հոդվածը՝ «Միքայել Նալբանդյանը Հնդկաստանում» վերնագրով, որտեղ արխիվային հարուստ փաստերի հիման վրա շարադրված է Նալբանդյանի Հնդկաստանյան ուղևորության հետ կապված ամբողջ պատմությունը։

Նույն այդ թվերից Երվանդ Շահազիզը ձեռնարկում է Նալբանդյանի անտիպ նամակների հավաքման ու հրատարակման աշխատանքին։ 1905 թվին «Լումա»-յում հրատարակում է «Նալբանդյանի նորագյուտ հնագույն նամակների առթիվ» հոդվածը։

Ցարական ցենզուրական խստագույն պայմանները հնարավորություն չեն տալիս նրան մասսաների սեփականությունը դարձնելու Մ. Նալբանդյանի բաղաքական գործունեության

հետ կապված բազմաթիվ փաստաթղթեր, որոնք նա խնամքով պահում է և հետագայում հրատարակում Սովետական Իշխանության տարիներին։

Երվանդ Շահազիզի նախասովետական շրջանի աշխատություններից ուշագրավ են «6-րդ և 7-րդ դարերի հայոց մտավոր կյանքը» (1894), «Մկրտիչ Հովսեփյան էմին» (1900), «Նոր Նախիջևանը և նոր նախիջևանցիք» (1903), «Խորեն արքեպիսկոպոս Գալֆայանը և Նալբանդյանի «Ախցմիքը» (1903) և այլն։

Երվանդ Շահազիզի գիտական գործունեության ամենաբեղմնավոր ժամանակաշրջանն սկսվում է Հայաստանում սովետական կարգերի հաղթանակից հետո։ 1922 թվականին Հայաստանի Լուսավորության Ժողովրդական Կոմիսարիատի հրավերով Շահազիզը Նոր Նախիջևանից փոխադրվում է Երևան և մեծ եռանդով նվիրվում իր սիրած աշխատանքին։ 1927 թվականին լույս է տեսնում նրա «Գաբրիել Սունդուկյան» ուսումնասիրությունը։ Մի քանի տարի նա գիտական բանասիրական աշխատանքին զուգընթաց վարում է Երևանի Գրական թանգարանի վարիչի պաշտոնը։ Նրա ջանքերով թանգարանը հարստանում է հայ գրականության պատմության վերաբերյալ մեծարժեք արխիվներով ու բազմաթիվ կարևոր նյութերով։

Սովետական շրջանում Շահազիզի հետաքրքրության առարկան դարձյալ հիմնականում դառնում են Միքայել Նալբանդյանը, Խաչատուր Աբովյանը, Ռաֆայել Պատկանյանը, Գաբրիել Սունդուկյանը և ուրիշները։

1931 թվականին լույս տեսավ նրա «Հին Երևանը» ընդարձակ ու փաստալից աշխատությունը, որը պարունակում է Երևան քաղաքի պատմությունը խոր անցյալից սկսած մինչև մեր ժամանակները։

Ընդամենը մի տարի անց՝ 1932 թվականին նա հրատարակեց «Դիվան Միքայել Նալբանդյանի» հատորը, որը պարունակում է բազմաթիվ անտիպ նամակները, գրությունները, մեծ մասամբ գրված բանտից։ Հեղինակը այս ամբողջ նյութը ընթերցողին ներկայացրել է արժեքավոր ծանոթագրություններով ու դիտողություններով։

1940 թվականին լույս տեսավ Շահազիզի «Դիվան Խաչատուր Աբովյանի» ստվար աշխատության առաջին հատորը, որի 2-րդ հատորը լույս տեսավ 1948 թվականին։ 1944 թվականին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան լույս ընծայեց Շահազիզի «Սմբատ Շահազիզի կյանքը» մենագրությունը, իսկ 1945 թվականին՝ «Խաչատուր Աբովյանի կյանքը» մենագրությունը։

1946 թվականից սկսած Շահազիզը սկսեց իր հետաքրքրական հուշերի տպագրումը պարբերական մամուլում, որոնք նույնպես կարող են կազմել մի ստվար հատոր։ Դրանցից ուշագրավ են հատկապես, Ստ. Նազարյանցի, Պ. Պողոսյանցի, Պ. Ադամյանի, Գ. Սունդուկյանի, Վ. Սուրենյանի և ուրիշների մասին գրած հիշողությունները։

Շահազիզը թողել է նաև մի շարք անտիպ աշխատություններ, որոնցից են «Դիվան Ռաֆայել Պատկանյանի» հատորը, «Աշտարակ» ստվար աշխատությունը և «Չերքեզահայերի պատմությունը»։

Ե. Շահազիզը մինչև իր կյանքի վերջին օրերը աշխատում էր մեծ եռանդով։ Իր ժողովրդի երջանիկ կյանքը սովետական պայմաններում, նրա կուլտուրայի ու գրականության անանխորնթաց ծաղկումը նրան մոռացնել էին ավել 96 տարիների այն երկար ճանապարհը, որի զգալի մասը անց էր կացրել նախասովետական շրջանի հայ ուսուցչի աննախանձելի պայմաններում։